


ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատ ԱՂԱՍՅԱՆ, Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիդյան ջարդերից մինչև մեր օրերը), պատասխանատու խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 94 էջ*:

Բանալի բառեր – հայ կերպարվեստ, կիրառական արվեստ, կորուստներ, Օսմանյան կայսրություն:



Հայ ժողովուրդն իրեն պատուհասած եղեռնական դարաշրջանում մարդկային ծանրագույն կորուստներին զուգահեռ կրեց նաև դրանց համարժեք հարվածներ: Թուրք-օսմանյան իշխանությունների կազմակերպած բարբարոսությանը զոհ գնաց հայ ժողովրդի դարերով կերտած մշակույթը. իրականացվեց մշակութային եղեռն:

Ամբողջովին դրան է վերաբերում ճանաչված արվեստաբան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի «Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում» խորագրով աշխատությունը: Այն

ընդգրկում է 1895-1896 թվականներին սուլթան Համիդի կազմակերպած ջարդերից մինչև մեր ժամանակները: Պատասխանատու խմբագիրն է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը:

Աշխատությունը կառուցված է պատմական ակնարկի ձևով: Հեղինակը հենվում է հայ և օտարազգի բազմաթիվ հեղինակների ուսումնասիրությունների, հոդվածների, հուշագրությունների, նամակների, տվյալ ժամանակի և հետագայի մամուլի և այլ աղբյուրների վրա:

Միանգամայն տեղին է այն դիտարկումը, որ հայ ժողովրդի հալածանքների, նրան պատմական բնօրրանից արտաքսելու, տեղահանելու տարիներին սուլթան Համիդը, իսկ հետո երիտթուրքական ոճրագործները նպատակ ունեին ոչ միայն վերացնելու հայությանը, այլև ոչնչացնելու հայկական բազմադարյան քաղաքակրթության ու մշակույթի նյութական բոլոր վկայությունները:

Հեղինակը հիմնավոր փաստարկում է, որ համիդյան ջարդերից հետո

* Ընդունվել է տպագրության 05.02.2019:

հատկապես Մեծ եղեռնի տարիներին, անդառնալի կորուստներ կրեց հոգևոր ու գեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող հայոց միջնադարյան ճարտարապետությունը: Ղեկավարվելով երիտթուրքական գլխավոր վանդալներից մեկի՝ ներքին գործոց նախարար Թալեաթ փաշայի հրահանգով՝ «ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում», ջարդարարները հողին հավասարեցրին ու ավերակ դարձրին Արևմտահայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերի գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը (և նրանցում ամփոփված ամեն ինչ): Ընդ որում տարբեր ու բազմաբնույթ աղբյուրներով ճշտվում ու ճշգրտվում է հայկական կրոնական հաստատությունների թիվը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Համադրելով այդ տվյալները՝ ի վերջո հեղինակը հանգում է այն եզրակացության, որ 1914-1918 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում բռնագրավվել, կողոպտվել և ավերվել են 2050 հայկական եկեղեցի և 203 վանք: Մշակութային եղեռնը, սակայն, չէր վերաբերում լոկ շինությունների ֆիզիկական կործանմանը: Ցեղասպանության ճարակին զոհ դարձան նաև այդ վանքերին ու եկեղեցիներին պատկանող, ինչպես նաև արևմտահայ ընտանիքներում պահվող և սերնդեսերունդ ժառանգաբար փոխանցվող հայոց միջնադարյան ձեռագիր մատյանները, այդ թվում՝ մանրանկարներով զարդարված գրչագրերը: Այդ առումով տեղին է մեջբերված Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, մեծանուն հայագետ ու արվեստաբան Գարեգին Հովսեփյանի դիպուկ բնորոշումը. «Ոչնչացան հայ ժողովրդի անգնահատելի գանձերը, որ ո՛չ ցեղը և ո՛չ ուտիճը պիտի ոչնչացնէր, բայց ոչնչացրեց մոլեգնեալ էնվերների և Թալեաթների թուրքական կառավարութիւնը՝ Վանտալների և Ատիլանների բարբարոսութիւնից առաւել աստիճաններով: Ոչնչացրել են հազարաւոր ձեռագիրներից բաղկացած ժողովածուները, որոնց մէջ մարմնաւորուած հայ արուեստը, հայ մշակոյթը, հայ միտքը, հայի հոգին» (էջ 11):

Աշխատության հեղինակը հմուտ պատմաբանի նրբին զգացողությամբ ներկայացնում է հայոց մշակութային կորուստները նախ ժամանակագրական հաջորդականությամբ՝ Մեծ եղեռնի նախերգանք հանդիսացած 1895-96 թվականներին, ապա Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում (նաև մինչև մեր օրերը):

Եվ այդ ամենը ներկայացվում է նահանգ առ նահանգ և գավառ առ գավառ: Սա զգալի հստակություն ու պարզություն է մտցնում քննարկվող հիմնահարցում:

Աշխատության էջերից հայ ընթերցողի համար պարզ է դառնում, թե արվեստի, գրի ու գրչության որքան և ինչպիսի թանկ կորուստներ ունեցավ հայ ժողովուրդը թուրք-օսմանյան դաժան ու դժնդակ տիրապետության ներքո: Թուրքական բարբարոսության ճիրաններում ոչնչացվեցին հայկական հարյուրավոր և հազարավոր հին և միջնադարյան ձեռագրեր, պատկերազարդ մատյաններ, հնատիպ եզակի գրքեր, մագաղաթյա կաշեպատ մատյաններ, կիրառական արվեստի բացառիկ գործեր, եկեղեցական թանկագին սպասքներ, անոթներ, սփռոցներ, սրբազան մասունքներ ու առարկաներ:

Հայ ժողովրդի և նրա ստեղծած աննման մշակութային արժեքների հանդեպ օսմանյան իշխանությունների, թուրք և քուրդ խուժանի գործած աննախադեպ հանցանքների՝ բռնությունների, կեղեքումների, հոգեկան և ֆիզիկական նվաստացումների բազմաթիվ փաստեր են վկայակոչված սույն աշխատության մեջ: Այս փաստերն այնքան ցնցող են, սարսռազդու, որ ինքնին վկայում են, թե համաշխարհային պատմության մեջ այդ կարգի մշակութային եղեռն առաջին անգամ էր տեղի ունենում: Նույնիսկ մարդկային գրիչն է երբեմն անգոր դառնում նկարագրելու օսմանյան արյունարբու իշխանությունների և թուրք-քուրդ վայրենաբարո հրոսակների կատարած բարբարոսությունները հայ կերպարվեստի և կիրառական արվեստի մեծ ու փոքր կոթողների հանդեպ:

Բազմաթիվ փաստեր են մեջբերվում, թե ինչպես գազազած ամբոխը, ճանապարհին սրբելով ու ավերելով ամեն ինչ, ներխուժել է հայկական վանքերն ու եկեղեցիները, թալանել ու աղտեղություններով պղծել է սուրբ մասունքները: Կոտորածների թոհուրոհում լիովին կամ մասամբ ոչնչացան եզակի միջնադարյան գրչագրեր, հնագույն ձեռագիր ու տպագիր գրքեր: Ներկայացված իրողությունները ահազանգում են, որ հայոց հինավուրց մշակույթի հանդեպ նման վերաբերմունք կարող էր դրսևորել միայն ու միմիայն գրից ու գրչությունից հեռու՝ անկիրթ ու բարբարոս հանրությունը: Թուրքական այդ բարբարոսությանն ականատես օտարներն անգամ (ինչպես օրինակ՝ արաբ փաստաբան Ֆայեզ էլ Ղոսեյնինը) պատմության առջև բարձրաձայն փաստել են, որ հայկական ձեռագրերի և հնատիպ գրքերից շատերի թերթերը, այդ թվում նաև եզակի մանրանկարներով զարդարված էջերը, թուրք նպարավաճառները հետագայում օգտագործել են որպես մթերքների ու ապրանքների փաթեթավորման անարժեք թուղթ (էջ 26):

Աշխատության հեղինակը փաստերի և տարբեր աղբյուրների համադրությամբ փորձում է որոշակի ճշգրտություն մտցնել 19-րդ դարի վերջի կոտորածների և ցեղասպանության տարիներին ոչնչացված ու անհետ կորած հայկական ձեռագրերի թվաքանակի հարցում: Սակայն դա ստուգապես ճշգրտել անհնար է, քանզի ճշգրիտ վիճակագրություն այդ ոլորտում երբեք էլ չի եղել: Ամենանվազ հաշվարկներով 19-րդ դարի 90-ական թթ. և Մեծ եղեռնի շրջանում ոչնչացված և անհետ կորած հայկական ձեռագրերի թիվը հասնում է տասը հազարի, այլ հաշվարկներով՝ քսան հազարի: Իսկ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Մայր ցուցակի և ձեռագրագիտության բաժնի վարիչ և գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանի քննությամբ համիդյան ջարդերի և Մեծ եղեռնի տարիներին ոչնչացվել և անհետ կորել է երեսուն հազար հայկական ձեռագիր: Այսինքն՝ նույնքան, որքան այսօր առկա է ողջ աշխարհում:

Հեղինակի դիտարկումներով, Հայոց ցեղասպանության տարիներին ձեռագրական առավել մեծ կորուստներ կրեց իր նշանավոր վանքերով և մատենադարաններով հարուստ Վասպուրականը: Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանը «Համառօտ նկարագրութիւն Վասպուրականի մէջ եղած մի քանի նշանաւոր վանքերու» ուսումնասիրության մեջ վերոնշյալ ժառանգության մասին հետևյալ դիպուկ բնութագրումն է

տալիս. «Վասպուրականի ինչպես շեն եղած բոլոր վանքերու մէջ, նույնպէս բոլոր գիւղերու եկեղեցիներու մէջ չկար եկեղեցի մը, ուր 10, 20, 30 կտոր ձեռագրեր չգտնուէին, նոյն իսկ անհատներու քով իրենց տուններու մէջ դրուած 100-աւոր, շուշփաներու մէջ փաթաթուած իբրեւ նուիրական սրբութիւն կը յարգուէին, կը պահպանուէին» (էջ 34): Հենց այդ թոհուբոհում ծանր հարվածներ ստացավ և ըստ էության կործանվեց նշանավոր Վարագավանքը:

Այդ առումով վկայակոչվում է վենետուցի գրող և գինվորական Ռաֆայել դե Նոգալես Մենդեսը, որը 1915 թ. ապրիլյան մարտերի ժամանակ Վանի հայկական թաղամասերը պաշարած թուրքական պահակազորի և հրետանու հրամանատարն էր: Վերջինս սառնասրտորեն նկարագրել է, թե ինչպէս թուրքերը ոմբակոծեցին հայերի պաշտպանական գլխավոր հենակետերը՝ X դարում կառուցված Սուրբ Պողոս և Սուրբ Պետրոս հարակից եկեղեցիներն ու Վարագավանքը՝ իր արժեքավոր բազմաթիվ ձեռագրեր ու հնատիպ գրքեր ունեցող մատենադարանով: Տեղեկացվում է նաև, որ նույն՝ 1915 թ. Վանա լճի արևելյան կազմում գտնվող Ալյուր գյուղի Ս. Աստվածածնի վանքից, ի շարս միջնադարյան այլ ձեռագրերի, հափշտակվել և անհետ կորել է X դարի հայ հանճարեղ բանաստեղծ, աստվածաբան, երաժիշտ ու փիլիսոփա Գրիգոր Նարեկացու «մատներով գրած» հանճարեղ ստեղծագործության՝ «Մատյան ողբերգության» չափածո աղոթագրքի մագաղաթաարձաթապատ բնագիրը: Հայ ձեռագրերի գողգոթայի վերաբերյալ այլ կարևոր փաստեր ու մանրամասնություններ են հաղորդվում:

Նշվում է, որ կողոպուտից ու կործանումից փրկված տասնյակ ու հարյուրավոր ձեռագրեր՝ առավելապես գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող, մանրանկարներով զարդարված և թանկարժեք շքեղ կազմեր ունեցող Ավետարաններ, թուրքերից ոմանք, դրանք վաճառելու նպատակով, տարել են արտերկիր: Արվեստի և գիտության այդ եզակի գանձերն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1920-ական թվականներին, հայտնվել են Կ. Պոլսի, Եգիպտոսի, Եվրոպայի և ԱՄՆ-ի տարբեր քաղաքների շուկաներում և հանվել վաճառքի: Հայոց ձեռագրերի մեծագույն մասը, ինչպես և այն ստեղծած ժողովուրդը, անցել է եղեռնի դժոխսային թոհուբոհի միջոցով: Հրի ու սրի միջով անցած և կործանումից հազիվ փրկված ձեռագիր մատյաններից շատերը մեզ են հասել «խիստ վնասուած, սկզբից և վերջից պակասաւոր, կազմերը պոկուած և աւերի ժամանակ օտար ձեռքերից փչացած»՝ թերարժեք, քայքայված ու խաթարված վիճակում (էջ 56):

Սույն աշխատության էջերից մենք տեղեկանում ենք նաև այն ջանքերի մասին, որոնք գործադրել են Հայ առաքելական եկեղեցու այրերն ու պատասխանատուները, նաև առանձին անհատներ ու գործիչներ հայ կերպարվեստի և կիրառական արվեստի գործերն ու մասունքները փրկելու ուղղությամբ: Այսպես, 1916 թ. մարտին կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցի կարգադրությամբ ստեղծվեց մի հանձնախումբ՝ անհապաղ ազատագրված Մուշ մեկնելու համար: Այդ խմբի առջև դրված հիմնական նպատակն էր. «Մուշի և նրա շրջակայքի ժողովրդեան գաղթի ժամանակ թողուած կամ թաքստոցներում պահուած վանքերի և եկեղեցիների գոյքն ու զարդերը, անօթները,

զգեստները, ամերից ու կողոպուտից ազատուած ազգագրական, հնագիտական, արուեստի և այլ մնացորդները արկղների կամ պարկերի մէջ դասատրել և ապահով տեղափոխել Մայր Աթոռ» (էջ 42):

Արժանին է մատուցվում անվանի պատմաբան, արևելագետ ու կովկասագետ Նիկողայոս Մառին, որը եղեռնի տարիներին աներևակայելի ջանքեր գործադրեց Վան քաղաքում և նրա շրջակայքում հնագիտական մեծ արժեքներ կայացնող հարյուրավոր ձեռագրերի փրկության համար: Ստեղծված աղետալի վիճակի մասին մեծանուն ակադեմիկոսը 1915 թ. հոկտեմբերին զեկուցագրերով դիմել է Սանկտ Պետերբուրգ՝ Կայսերական գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովին:

Անվանի գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանի հուշագրությունից բերված հատվածը վկայում է, որ 1915 թ. ամռանը՝ Վանի հայության գաղթի օրերին, Ախավանքում փրկված ձեռագրերը «... սնդուկների մէջ առագաստանավով բերում են Ավանց գյուղի նավահանգիստը և այստեղ հաջողացնում են երեք սնդուկ ուղարկել Էջմիածին, իսկ երկու սնդուկ ձգում են ծովը, որպեսզի թուրքերի ձեռքը չընկնի» (էջ 40):

Աշխատության հեղինակն այս ամենը հիմնավոր ներկայացնելուց հետո եզրահանգում է, որ իր պատմական բնօրրանում հայ ժողովրդի կերտած կերպարվեստի և կիրառական արվեստի գանձերի ոչնչացումը դաժան հարված էր մարդկային ողջ քաղաքակրթությանը, քանզի դրանով իսկ մեծապես տուժեց ու աղքատացավ համաշխարհային կերպարվեստը:

Ահա ընդհանուր գծերով այսպես ներկայացրինք և ընթերցողի ուշադրությունը բևեռեցինք գրախոսվող սույն աշխատության վրա, որում բազմաթիվ և բազում հետաքրքիր և ուսանելի այլ դիտարկումներ ու հարցադրումներ կան:

Աշխատությունը գրված է բարձր մակարդակով, հմուտ մասնագիտական որակներով: Հեղինակի գրելաոճը զուսպ է և տարողունակ, որի շնորհիվ ոչ ստվարածավալ գրքով կարողացել է բավականաչափ շատ և կարևոր տեղեկատվություն փոխանցել ընթերցողին:

Մեր կողմից հետևյալ առաջարկությունը կուզենայինք անել. հարկ է, որ սույն օգտակար ու կարևոր աշխատությունն ավելի ծավալուն դառնա նոր աղբյուրների ներգրավումով, լուսանկարների և այլ նյութերի օգտագործումով, և անպայման թարգմանվի օտարազգի ընթերցողների համար մի շարք եվրոպական լեզուներով:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
հրապարակագիր, լրագրող